



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- Հետազոտության թեման՝** Ինտերակտիվ մեթոդների կիրառությունը որպես աշակերտների ուսումնառության խթանման միջոց:
- Հետազոտող ուսուցիչ՝** Տիգրանուհի Կարապետյան
- Դպրոց՝** Վարդանաշենի Մայիս Մինասյանի անվան միջնակարգ դպրոց
- Մենթոր ուսուցիչ՝** Շուշան Վարդանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ.....	4
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	13
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	14

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հանրակրթական դպրոցում մաթեմատիկայի ուսուցումն ունի կրթական, դաստիարակչական և զարգացնող նպատակներ:

Ուսուցման գործընթացում ներկայումս լայն տեղ է հատկացվում ժամանակակից տեխնոլոգիաներին, անտեսելով ավանդական տեխնոլոգիաները:

Կրթության զարգացման միջազգային միտումները մանկավարժական նոր տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտություն են առաջ բերել:

Հետազոտության նպատակները՝

1. Ուսումնասիրել ժամանակակից կրթական մեթոդները և դրանք կիրառել ուսումնառության գործընթացում:

2. Ստեղծել այնպիսի կրթական համակարգ, որտեղ ընդգրկված կլինեն նորագույն մոտեցումներն ու ձեռքբերումները:

Դրանցից են ուսուցման ինտերակտիվ մեթոդները՝

- Ուսուցում համակարգչով,
- Տեղեկություն համացանցով,
- Համագործակցային ուսուցում և այլն
- Պրակտիկ_գործնական(պրագմատիկ):

Ինտերակտիվ ուսուցումը ճանաչողական գործունեության կազմակերպման հատուկ ձև է: Այն ենթադրում է կոնկրետ ու կանխատեսելի նպատակներ: Դրանցից մեկը ուսուցման այնպիսի պայմանների ստեղծումն է, որոնց դեպքում սովորողը զգում է իր հաջողությունը, իր ինտելեկտուալ կայացումը, ինչն իր հերթին ուսուցման գործընթացը դառնում է ավելի հաջողված: Ինտերակտիվ ուսուցման էությունը կայանում է ուսումնական այնպիսի գործընթացի կազմակերպման մեջ, որի դեպքում գրեթե բոլոր սովորողները ընդգրկվում են ճանաչողական գործընթացի մեջն հնարավորություն են ստանում ներկայացնել այն, ինչ գիտեն ու մտածում են: Ճանաչողական գործընթացում սովորողների համատեղ գործունեությունը, ուսումնական նյութի յուրացումը նշանակում է, որ յուրաքանչյուրն այդ գործընթացի մեջ ներմուծում է իր անհատական ներդրումը, որ տեղի է ունենում գիտելիքների, գաղափարների, գործունեության ձևերի փոխանակում: Ընդ որում, այս ամենը տեղի է ունենում փոխադարձ աջակցության պայմաններում, ինչը թույլ է տալիս ձեռք բերել նոր գիտելիքներ, զարգացնել ճանաչողական գործունեությունը: Այս աշխատանքի նպատակն է ցույց տալ ինտերակտիվ ուսուցման էությունը, մեթոդների տեսակներն ու կիրառման առանձնահատկությունները:

Ինտերակտիվ մեթոդներն ուսուցչին հնարավորություն են տալիս իրականացնելու ուսուցում, որի ժամանակ անհրաժեշտ է ապահովել համագործակցային ուսուցման որոշակի տարրեր: Ինտերակտիվ մեթոդների դերը և նրանց առավելությունը նոր ուսուցման գործում, ինչպես նաև համագործակցային խմբային աշխատանքի էությունը (ի տարբերություն ավանդականի) ավելի լավ հասկանալու համար՝ հարցին մի փոքր ավելի հանգամանակից անդրադառնանք: Արդեն նշվեց, որ ի տարբերություն ավանդական ուսուցման, համագործակցային ուսուցման իրականացման ժամանակ խիստ կարևորվում են համագործակցային ուսուցման տարրերը:

Ուսուցման փոխներգործուն «ինտերակտիվ» մեթոդները հիմնված են խմբի անդամների փոխազդեցության, ներքին ազատության և ստեղծագործական երևակայության վրա: Ինտերակտիվ «անգլերենում «inter»՝ փոխադարձ, «acto» գործողություն» նշանակում է փոխանցել կամ երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի հետ: Աշակերտների հաղորդակցման հմտությունների զարգացումը և երկխոսության մթնոլորտի ստեղծումը օգնում են նրան կողմնորոշվելու հարափոփոխ աշխարհում, դրսևորելու ներքին հնարավորությունները: Ինտերակտիվ ուսուցման առանձնահատկությունն այն է, որ բոլոր սովորողներն ընդգրկվում են ուսումնական համապատասխան միջավայրում, յուրաքանչյուրն իր անհատական ներդրումն է ունենում մտքերի փոխանակման գործընթացում, ձևավորվում է բարյացակամության և փոխօգնության մթնոլորտ¹: Աշակերտները սովորում են քննադատաբար և ստեղծագործաբար մտածել, քննարկել արտահայտված տեսակետները, մասնակցել բանավեճերի, ինքնատիպ մտքեր արտահայտել: Ինտերակտիվ ուսուցմամբ դասերի ընթացքում կազմակերպվում են անհատական, զույգերով, փոքր խմբերով աշխատանքներ, կիրառվում են դերային խաղեր, ստեղծագործական գործունեություն: Այս ուսուցման հիմնական առանձնահատկությունն այն է, որ ուսումնական գործընթացը հիմնականում կենտրոնանում է սովորողների զգացմունք ային ներաշխարհի վրա, կարևորվում են նրանց տպավորությունները, հնարավորությունները. արժևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի հաղորդմանը, այլ մտքի սրընթաց տեղաշարժերով որևէ գաղափարի, եզրակացության հանգելը:

Մտքերի տարափը կամ մտազրոհը խմբային աշխատանքի պարզագույն, բայց շատ

¹ Իսկանդարյան Ս. Ա., Իսկանդարյան Ս., Ս., Թվաբանական գործողությունների ուսուցումը կրտսեր դպրոցում: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Եր.: «Զանգակ-97», 2009թ., էջ 136:

արդյունավետ մեթոդ է: Այդ մեթոդը տարափ են անվանում, քանի որ հաճախ խրախուսվում են պարզապես ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Խմբի անդամների առջև կոնկրետ խնդիր է դրվում. Կարելի է ասել՝ մեթոդը ուսուցչի համար դասավանդման, իսկ աշակերտի համար՝ գիտելիքերը, կարողությունները ու հմտությունները յուրացնելու եղանակ է:

Պետք է կիրառվեն աշակերտակենտրոն մոտեցումներ, խրախուսվեն համագործակցությունը, նախաձեռնությունը, ստեղծագործական մտածողությունը: Այս տեսանկյունից առավել արդյունավետ է ուսուցման փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդը, քանի որ այն ապահովում է սովորողների մասնակցությունը իրենց իսկ ուսումը կազմակերպելիս: Այն նպաստում է.

- փոխադարձ վստահության մթնոլորտի ստեղծմանը, որը կօգնի բարդույթներից ձերբագատվել,
- բարյացակամ մթնոլորտի ստեղծմանը, որը կօգնի նվազեցնել աշակերտների լարվածությունը,
- խմբի անդամների արդյունավետ համագործակցությանը,
- խմբի համար յուրաքանչյուր աշակերտի կարևոր լինելու հանգամանքին,
- տեղեկատվության վերլուծությամբ ինքնուրույն եզրահանգումներ կատարելուն²:

Մեթոդների ընտրությունը պետք է կատարվի՝ ելնելով ուսուցչի նպատակադրումից: Ըստ նպատակադրման՝ ժամանակակից մեթոդները դասակարգվում են հետևյալ խմբերով.

1. Մեթոդներ, որոնք հարմար են դասի խթանման փուլում՝ մտազրոհ, խմբավորում, պրիզմա, մտածիր - զույգ կազմիր - քննարկիր, ձևակույտ և այլն:
2. Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի իմաստի ընկալման փուլում՝ T-աձև աղյուսակ, Վենի դիագրամ, գաղափարների քարտեզ, փոխգործուն նշանների համակարգ, բանավեճ, զրույց, համառոտ դասախոսություն, խորանարդում և այլն:
3. Գրական տեքստերի ուսուցմանը նպաստող մեթոդներ՝ կանխագուշակումների աղյուսակ, կրկնակի գրառումների օրագիր, հեղինակի հարցում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգ բույսերից շարադրանքի մեթոդ և այլն:
4. Համագործակցային ուսուցման մեթոդներ՝ խճանկար, զբոսանք պատկերասրահում, նախագծի մեթոդ և այլն:

1. ² Мясоед, Т. А. Интерактивные технологии обучения. - 2004г.

5. Մեթոդներ, որոնք հարմար է կիրառել կշռադաստման փուլում՝ քառաբաժան, 10 րոպեանոց շարադրության մեթոդ, կարուսելաձև մտագրոհի և այլն:

Համագործակցային ուսումնասրության մեթոդներով աշխատել նշանակում է նախ աշակերտներին բաժանել փոքր թիմերի՝ խմբերի: Գերադասելի է, որ նման խմբերում ընդգրկվեն տարբեր մտածելակերպերի և կարողությունների տեր աշակերտներ: Այս դեպքում խումբը կարող է առաջադրվող նյութը դիտարկել իր ամբողջ բազմազանության մեջ: Աշակերտներից յուրաքանչյուրը հնարավորություն է ստանում ներկայացնել իր տեսակետը և ծանոթանալ մյուսների տեսակետներին: Երեխաները սովորեցնում են իրար և սովորում միմյանցից:

Ուսուցման մոդելների շարքում առանձնացվում են երեքը՝ պասիվ (էքստրաակտիվ ռեժիմ), ակտիվ (ինտրաակտիվ ռեժիմ), ինտերակտիվ (ինտերակտիվ ռեժիմ):

Պասիվ մոդելի առանձնահատկությունը ուսուցանող միջավայրի ակտիվությունն է: Դա նշանակում է, որ սովորողները յուրացնում են նյութը ուսուցանողի խոսքից կամ դասագրքի տեքստից, չեն շփվում միմյանց հետ և չեն կատարում ոչ մի ստեղծագործական առաջադրանք: Այսպիսի մոդելի օրինակներ են դասերի ավանդական ձևերը³:

Ակտիվ մոդելը խթանում է սովորողների իմացական գործունեությունը և ինքնուրույնությունը: Այս մոդելն իբրև նախապայման ունի ստեղծագործական առաջադրանքների (ավելի հաճախ՝ տնային) առկայությունը և պարտադիր շփումը: Այս մոդելի թերությունն այն է, որ սովորողները հանդես են գալիս որպես ուսուցման սուբյեկտ միայն իրենց համար և կրթական գործընթացում փոխգործակցում են լոկ ուսուցչի հետ:

Այսպիսով, այս մոդելին բնորոշ է միակողմանի ուղղվածությունը, այսինքն՝ միայն ինքնուրույն գործունեության, ինքնուսուցման, ինքնադաստիարակության, ինքնագարգացման տեխնոլոգիաներ:

Ինտերակտիվ մոդելն իր առջև նպատակ է դնում կազմակերպել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են: Ինտերակտիվ ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն հանգամանքների և իրավիճակների վերլուծության հիման վրա, տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ, որը դրդում է ակտիվ գործունեության⁴: Այդ իսկ պատճառով դասի կառուցվածքի մեջ ներառվում են ուսուցման ինտերակտիվ մոդելի միայն տարրեր՝ ինտերակտիվ տեխնոլոգիաներ, այսինքն՝

³ ՀարությունյանՆ. Ս. ՉիրուխյանՍ. Ա. «Մաթեմատիկայի իմ այբուբենը»Մաս 1,2 Երևան 2007

⁴ Бугримов, И.В. Использование интерактивных технологий на занятиях– 2005

կոնկրետ ձևեր և մեթոդներ, որոնք թույլ են տալիս դարձնել դասն անսովոր և ավելի հազեցած ու հետաքրքիր: Չնայած կարելի է անցկացնել ամբողջապես ինտերակտիվ դասեր:

Ինտերակտիվ են այն տեխնոլոգիաները, որոնց կիրառման ժամանակ սովորողը ուսուցանող համակարգում հանդես է գալիս մշտապես փոփոխվող սուբյեկտիվ օբյեկտիվ հարաբերություններում, պարբերաբար դառնալով նրա ինքնավար ակտիվ տարրը:

Ուսումնական գործընթացում ինտերակտիվ ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը պայմանավորված է հետևյալ փուլերով.

1. *Կողմնորոշում*. խաղի մասնագետների և փորձագետների պատրաստման փուլ: Ուսուցանողը ներկայացնում է աշխատանքի ընթացակարգը, սովորողների հետ քննարկում է պարապմունքների գլխավոր նպատակներն ու առաջադրանքները՝ տալով խաղի օրենքների բնութագրերը:

2. *Պատրաստվածության ստուգում*. ուսուցանողն առաջարկում է խաղի բնույթը, անդրադառնում է խաղի առաջադրանքներին, կանոններին, դերերին, խաղի ընթացքին, միավորների հաշվման կանոններին (խաղի վերաբերյալ կազմվում է աղյուսակ): Սովորողները հավաքում են լրացուցիչ տեղեկատվություն, խորհրդակցում են ղեկավարի հետ և քննարկում խաղի բովանդակությունն ու գործընթացը:

Ինտերակտիվ մեթոդների կիրառման ժամանակ սովորողը դառնում է գործընթացի լիարժեք մասնակից, նրա փորձը դառնում է ճանաչողության հիմնական աղբյուրը: Սովորեցնողը պատրաստի գիտելիքներ չի տալիս, բայց սովորողին խթանում է ինքնուրույն որոնումների: Ի տարբերություն ավանդական մեթոդների, ինտերակտիվ ուսուցման ընթացքում փոխվում է ուսուցանողի ու սովորողի փոխհարաբերությունները, ուսուցանողի ակտիվությունը զիջում է սովորողի ակտիվությանը, իսկ սովորեցնողի խնդիրն է դառնում նրանց նախաձեռնության համար նպաստավոր պայմանների ապահովումը: Ինտերակտիվ մեթոդները ոչ մի կերպ չեն փոխարինում դասախոսություններին, տեքստային աշխատանքներին, այլ նպաստում են դրանց լիարժեք յուրացմանը, ձևավորում են կարծիքներ, հարաբերություններ, վարքի հմտություններ: Հոգեբանները հավաստում են, որ ինտերակտիվ գործընթացում դիտարկվում է ընկալման բարձր աստիճան, հիշողության բարձրացման արդյունավետություն, զարգանում են անձի ինտելեկտուալ ու մտավոր այնպիսի հատկությունների զարգացում, ինչպիսիք են կայուն ուշադրությունը,

ուշադրության բաշխման կարողությունը, գործընկերոջ գործունեության վերլուծությունը և այլն⁵:

Ուսումնական գործընթացը պետք է իրականացվի համակարգված և համատեղ: Ինտերակտիվ ուսուցումն առավել արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ մեթոդները.

1. Ձույգերով աշխատանք

Սովորեցնողը պետք է մշակի նոր մեթոդներ զույգերով աշխատանքը կազմակերպելու համար, որտեղ սովորողները պետք է սովորեն ինքնուրույն հարցեր տալ միմյանց և պատասխանել «հակառակորդի» հարցերին:

2. Կարուսել

Սովորողներին շատ է դուր գալիս ինտերակտիվ տեխնոլոգիայի այս տեսակը, երբ խմբում ձևավորվում են երկու՝ ներքին և արտաքին օղակներ: Այդ ձևով նրանք հասցնում են հաշված բոպենների ընթացքում խոսել մի քանի թեմաների մասին՝ փորձելով գրուցակցին ապացուցել պատասխանի ճիշտ տարբերակը⁶:

3. Ակվարիում

Այս տեխնոլոգիայի իմաստն այն է, որ մի քանի սովորողներ իրավիճակը խաղարկում են շրջանաձև, իսկ մյուսները, հետևելով իրավիճակին, կատարում են արդյունքների վերլուծություն:

4. Առաջադրանքների ծառ

Այս տեխնոլոգիայի էությունը հետևյալն է. խումբը բաժանվում է երեք կամ չորս մասի: Խմբերն ունեն հավասար քանակությամբ մասնակիցներ: Յուրաքանչյուր խումբ քննարկում է հարցը և գրառումներ կատարում «իր ծառի» վրա, հետո խմբերը, տեղափոխվելով «հարևան ծառ», ներկայացնում են իրենց կարծիքները:

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը, բացի գիտելիք փոխանցելուց, նպատակ է հետապնդում զարգացնելու աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա SS ոլորտում որոշ գիտելիքներ. ուսման այս մեթոդի նպատակներից է նաև նշված կարողությունների զարգացումը: Այս դեպքում ուսուցիչը կատարում է համակարգողի կամ խորհրդատուի դեր: Խնդիրների լուծման վրա հիմնված

⁵ ՀարությունյանՆ. Ս. ՉիրուխյանՍ. Ա. «Մաթեմատիկայի իմ այբուբենը»Մաս 1,2 Երևան 2007

⁶ Мясоед, Т. А. Интерактивные технологии обучения. - 2004г

ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է պետք սովորել⁷:

Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական կյանքից վերցված խնդիրների համար: Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցելու այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավոր խոսքի կարողությունները⁸:

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը նորարարական մեթոդ է, որի դեպքում օգտագործվում են նոր նյութը լուծում պահանջող խնդրի տեսքով ներկայացման մանկավարժական կառուցողական մեթոդներ:

Այս մեթոդի կիրառման հիմնական քայլերն են՝

- ա) առաջադրանքի սահմանումը,
- բ) տեղեկությունների որոնման տարատեսակ ռազմավարությունները,
- գ) տվյալներ և տեղեկություններ ստանալու մատչելիությունը (որտեղ),
- դ) տեղեկությունների օգտագործումը և խնդիրների լուծումը,
- ե) սինթեզը,
- զ) գնահատումը:

Համագործակցային քննարկումը աշակերտների հաղորդակցման և ճարտասանական կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Քննարկման ընթացքում բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն խոսելու (պայմանով, որ սահմանված կանոնները պահպանվում են: Օրինակ՝ համագործակցային քննարկմամբ կազմվում են աղյուսակներ:

⁷ **Իսկանդարյան Սուրեն, Իսկանդարյան Սվետլանա**, Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկայի ընտրովի գլուխներ, Երևան, 2012:

⁸Վարդումյան Ս. և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում, Այոթքս, Ե, 2003

Անվանական թվեր թեման ուսումնասիրելիս ուսուցչի հիմնական խնդիրն է ձևավորել հասկացության հաշվման նոր միավորի՝ հազարի մասին՝ որպես 2-րդ դասի միավոր՝ հիմնվելով դասի հասկացության վրա, սովորեցնել կարդալ և գրել բազմանիշ թվերը, ընդհանրացնել երեխաների գիտելիքները դրական ամբողջ թվերի թվարկման վերաբերյալ:

Ժամանակակից ուսուցումը պահանջում է կիրառել առանցքայնորեն նախկինում կիրառվող մեթոդներից տարբեր մեթոդներ և մեխանիզմներ: Մանկավարժության մեջ առանձնացնում են ուսուցման մի քանի մոդելներ՝

1. պասիվ, երբ սովորողը հանդես է գալիս որպես ուսուցանվող «օբյեկտ» (լսում և նայում է),

2. ակտիվ, երբ սովորողը հանդես է գալիս որպես ուսուցանվող «սուբյեկտ» (ինքնուրույն աշխատանքներ, ստեղծագործական առաջադրանքներ),

3. ինտերակտիվ փոխազդեցություն:

Ուսուցման նոր մեթոդների մասին հիմնավոր պատկերացում կազմելու համար հանգամանորեն ներկայացնենք նրանցից մի քանիսը:

1. ԽՃանկար Կան «Խճանկար» (Ջիգտ) մեթոդի տարատեսակներ: Նկարագրենք դրանցից մեկը: Հանձնարարվում է կարդալ փոքրածավալ գրքեր կամ այլ նյութեր: Խմբի յուրաքանչյուր անդամի պատահականորեն հանձնարարվում է դառնալ ընթերցած նյութերի որոշակի ոլորտի փորձագետ:

2. Խմբային հետազոտության մեթոդ: Այս մեթոդի կիրառման ընթացքում աշակերտները խմբերով աշխատում են կոնկրետ խնդրի վրա: Մյուս մեթոդների նման սա նույնպես հիմնվում է աշակերտների փոխօգնության և համագործակցության վրա: Ի տարբերություն մյուս մեթոդների, սրա հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է:

3. Բանավեճ: Այս մեթոդը նույնպես ունի տարատեսակներ՝ «Դեբատ», «Խաղ - բանավեճ», «Անկյուններ» և այլն: Քանի որ երկխոսությունը չափազանց կարևորվում է ժամանակակից կրթամշակութային կյանքում, որը տրված է համամարդկային բոլոր արժեքների ընկալման և փոխանակման հիմքում, ապա նրա (երկխոսության) ուսուցման կարևորագույն ուղիներից մեկը բանավեճն է: Այդ պատճառով այս մեթոդն իր տարատեսակներով բավականին կարևորվում է համագործակցային ուսուցման մեթոդների մեծ խմբում:

Կարելի է շատ երկար խոսել նորարարական մեթոդների շուրջ, որովհետև դա ընդարձակ թեմա է, քննարկել մեթոդներին առնչվող բազմաթիվ ու բազմապիսի հարցեր:

Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման առանձնահատկությունն այն է, որ աշակերտները գիտելիքներ պետք է ստանան ոչ թե պատրաստի ձևով՝ ուսուցչի հաղորդումից, դասագրքից և այլն, այլ ինքնուրույնաբար որոնողական, հետազոտական, ստեղծագործական աշխատանքի արդյունքում: Դա աշակերտների մեջ դրական վերաբերմունք է ձևավորում ուսման նկատմամբ, առաջացնում է կայուն դրդապատճառներ և հետաքրքրություն, խթանում է հաղորդակցական և համագործակցային կարողությունների զարգացմանը, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորմանը, նպաստում է բարոյակամային որակների ձևավորմանը, դժվարությունների հաղթահարմանը: Այս տեսանկյունից այսօր կիրառվող ծրագրերից, մեր կարծիքով, բավականաչափ արդյունավետ է խիտ համակարգը՝ որպես մտածողությունը խթանող համալիր միջոց⁹:

ԽԻԿ-ը ժամանակակից ուսուցման մեթոդների համակարգ է, որը ուսուցման գործընթացը բաժանում է հետևյալ փուլերի՝

1. Խթանում
2. Իմաստի ընկալում
3. Կշռադատում

Բնութագրելով յուրաքանչյուր փուլում ուսուցչի անելիքը՝ ԽԻԿ-ը նաև առաջ է քաշում մի շարք մեթոդներ՝ տվյալ փուլին անհրաժեշտ արդյունքին հասնելու համար:

Խթանման փուլի հիմնական նպատակներից են՝

Նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները, քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով ակտիվացնել աշակերտներին, աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի խթանման փուլում՝

Ստագրոհ, խմբավորում, պրիզմա, մտածիր-զույգ կազմիր-քննարկիր, ձնագնդի, հինգ թուղանոց ազատ շարադրանք:

Իմաստի ընկալման փուլի նպատակներից են՝

Սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի իմաստի ընկալման փուլում՝

T-աձև աղյուսակ, գաղափարների քարտեզ, Վենի դիագրամ, փոխգործուն նշանների համակարգ, խորանարդում, խճանկար, երեք բանալի և մեկ կողպեք, շրջագայություն

⁹ Мясоед, Т. А. Интерактивные технологии обучения. - 2004г

պատկերասրահում:

Ինտերակտիվ ուսուցումը միաժամանակ լուծում է մի քանի խնդիրներ.

1. Չարգացնում է հաղորդակցական հմտություններն ու կարողությունները, նպաստում է սովորողների միջև էմոցիոնալ կոնտակտների հաստատմանը:

2. Լուծում է ինֆորմացիոն խնդիրը, քանի որ սովորողներին ապահովում է անհրաժեշտ ինֆորմացիայով, առանց որի հնարավոր չէ իրականացնել համատեղ գործունեություն:

3. Չարգացնում է ընդհանուր ուսումնական հմտություններն ու կարողություններ՝ վերլուծություն, նպատակադրում, այսինքն ապահովում է կարևորագույն խնդիրների լուծում:

4. Ապահովում է դաստիարակչական խնդիրներ, քանի որ սովորեցնում է աշխատեցնել խմբում, հաշվի առնելով ուրիշների կարծիքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից ուսուցումը պահանջում է կիրառել առանցքայնորեն նախկինում կիրառվող մեթոդներից տարբեր մեթոդներ և մեխանիզմներ: Մանկավարժության մեջ առանձնացնում են ուսուցման մի քանի մոդելներ՝

1. պասիվ, երբ սովորողը հանդես է գալիս որպես ուսուցանվող «օբյեկտ» (լսում և նայում է),
2. ակտիվ, երբ սովորողը հանդես է գալիս որպես ուսուցանվող «սուբյեկտ» (ինքնուրույն աշխատանքներ, ստեղծագործական առաջադրանքներ),
3. ինտերակտիվ փոխազդեցություն:

Նորարական մոդելների օգտագործումն ուսուցման գործընթացում ենթադրում է առօրյա կյանքից մոդելների սիմուլյացիաններ, դերային խաղերի օգտագործում:

Նորարարություն հասկացությունը անգլերենից թարգմանաբար նշանակում է «inter»- «փոխադարձ», «act»-«գործել»: Ինտերակտիվ ուսուցումը կազմակերպման հատուկ ձև է, որոնցում բացառված է, որ աշակերտը չմասնակցի կոլեկտիվ, փոխլրացնող, ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների ճանաչողությանը: Ինտերակտիվ ուսուցման գլխավոր նպատակն է ուսուցման գործընթացը կատարել այնպես, որ բոլոր սովորողները փորձնականորեն հայտնվեն տվյալ գործընթացում: Բացառվում է կրթական գործընթացին մասնակցող անդամների կամ որևէ գաղափարի գերիշխանությունը: Ներգործության օբյեկտից ուսանողը վերածվում է փոխազդեցության սուբյեկտի: Նա ինքն է ակտիվորեն մասնակցում կրթության գործընթացին, հետևելով իր անհատական ուղուն: Ինտերակտիվ ուսուցման մեթոդի ներդրումը ժամանակակից կրթական համակարգում ներկայումս ամենահաջողվածն է: Ընդ որում «ինտերակտիվ ուսուցումը» ընկալվում է տարբեր կերպ: Ուսուցման նման մեթոդի գաղափարը ձևավորվել է 90-ականների կեսերին, առաջին վերբրաուզերների և ինտերնետային ցանցի կիրառման զարգացմանը զուգընթաց: Այդ պատճառով, մի շարք մասնագետներ ընկալում են այդ ուսուցումը, որպես ինտերնետային ռեսուրսների և համակարգչային ցանցի օգտագործում: Մակայն ընդունելի է նաև ավելի լայն մեկնաբանությունը, ինչպիսին է համագործակցության հասկացությունը, երբ գտնվում էք երկխոսության մեջ ինչ-որ բանի (համակարգիչ) կամ ինչ-որ մեկի (մարդ) հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան, Մանկավարժություն, Երևան, 2005
2. Իսկանդարյան Ս. Ա., Իսկանդարյան Ս., Ս., Թվաբանական գործողությունների ուսուցումը կրտսեր դպրոցում: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Եր.: «Զանգակ-97», 2009թ., էջ 136:
3. Լ.Ս. Մետլինա «Մաթեմատիկական մանկապարտեզում», Երևան 1988թ.
4. Հարությունյան Հ. Ս. «Խաղալով սովորենք մաթեմատիկա», Երևան 2003 Օժանդակ, լրացուցիչ
5. Հարությունյան Հ. Ս. Չիբուխչյան Ս. Ա. «Մաթեմատիկայի իմ այբուբենը» Մաս 1,2 Երևան 2007
6. Մկրտչյան Արաքսյա – Տրամաբանության տարրերի ներառումը և ուսուցման մեթոդիկական մաթեմատիկայի դպրոցական դասընթացում
7. Վարդումյան Ս. և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում, Այռեքս, Ե, 2003
8. Козина, Е. Польза от интерактивного обучения. – 2001г.
9. Мясоед, Т. А. Интерактивные технологии обучения. - 2004г.
10. Суворова, Н. Интерактивное обучение. - 2005г.
11. Кашлев, С.С., Технология интерактивного обучения. - 2005.
12. Бугримов, И.В. Использование интерактивных технологий на занятиях – 2005.